27 Քու հրամաններուդ ճամբան ինծի իմացուր,
Եւ քու պամնչելիքներուդ վրայով պիտի *մտածեմ:

28 Խմ անձս արտմութենէն կը հաղի.
Հաստատէ զիս քու խօսքիդ համեմատ:

29 Ստութեան ճամբան հեռացուր ինծմէ,
Ու քու օրէնքդ շնորհէ ինծի:

30 Ճշմարտութեան ճամբան ընտրեցի,
Եւ քու գատասատաներդ էմ առջես դրի:

31 Քու վկայութիւններուդ յարեցաց.
Ու Տէր, զիս մի տմշցներ:

32 Քու պատուիդանքներուդ ճամբուռ մէջ պիտի լազեմ:
Վասն զի դուն իմ սիրոս պիտի լայնցնես:

ՀԵ

33 Ու Տէր, սորվեցուր ինծի քու կանոններուդ ճամբան,
Ու մինչև վերջը պիտի պահէնմ զանիկա:

34 Խմաստան ըրէ զիս, որպէս զի քու օրէնքդ պահէնմ,
Ու բոլոր պատով զանիկա ի դործ զնեմ:

35 Առաջնորդէ ինծի քու պատուիդանքներուդ շուրջին
մէջ,
Վասն զի անոր հաւանեցաց:
36 Իր սիրոս քու վկայութիւններուդ յօժարեցուր,
Ու ոչ թէ առաջութեան:
37 Ես դարձուր իմ աչքերս, որպէս զի սնասի բան չուես-
նեն.
Եւ զիս քու ճամբուռ մէջ կենդանացուր:
38 Հաստատէ քու խօսքդ:

Քեղմէ վախցոյ ծառայիդ վասյ:
39 Ես գարձաւուր ինծմէ իմ նախատինքս, որմէ կը վախ-
նամ՝,
Վասն զի քու գատասատաններդ բարի եմ:
40 Ահա ցանկացաց քու հրամաններուդ
Քու արդարութեանդ մէջ կենդանացուր զիս:

Վ. Ա. Վ.
41 Ու Տէր, թող իմ վրաս գայ քու ողբրմութիւնդ,
Եւ քու փրկութիւնդ քու խօսքիդ համեմատ:
42 Ու ես խօսքով պատասխան պիտի տամ՝ զիս նախա-
տողին,
Վասն զի քու խօսքիդ յաւացած եմ:
43 Եւ Ճշմարտութեան խօսքը բնաւ մի հեռացներ իմ
բրդնէս,
Վասն զի քու գատասատաններուդ յաւացած եմ:
44 Ու քու օրէնքդ միշտ պիտի պահէնմ
Յաւիտեան յաւիտենից,
45 Եւ լայնարձակ տէզի մէջ պիտի բալեմ,
Քանզի քու հրամաններդ խնդեցի:
46 Ու քու վկայութիւններդ թագաւորներուն առջեւ
պիտի խօսիմ,
Եւ պիտի չարչնամ:
47 Ու պիտի ուրախանամ՝ քու պատուիրանքներովդ
Զորոնք սիրեցի:
48 Եւ ճեռքերս գէպի ի քու պատուիրանքներդ պիտի
վերցնեմ՝ զըսնիք սիրեցի,
Ու քու կանոններուդ վրայով պիտի մտածեմ:

*կամ, խօսիմ. Աալ. Ճիւ. 5, 6:

ԶԱՅԻՆ

- 49 Յիշէք քու ծառայիդ եղած խօսքը,
Ալուն վրայ ինձի յառապ տուիր:
- 50 Խմ նեղութեանս մէջ միբիթարութիւնս այս է,
Վասն զի քու խօսքդ զիս կենդանացուց:
- 51 Ամբարտաւանները իիստ շատ ծաղր ըրին զիս,
Բայց ես քու օրէնքդ չխոսորեցայ:
- 52 Ով Տէր, քու առաջնաւն դատաստաններդ յիշեցի,
Ու միբիթարուեցայ:
- 53 Սոսկումը զիս բանեց այն ամբարիշտներուն համար՝
Որոնք քու օրէնքդ կը թողուն:
- 54 Քու կանոններդ ինձի երդեր եղան
Խմ պանդիստաթեանս անոնը մէջ:
- 55 Ով Տէր, գիշերը քու անունդ յիշեցի,
Ու քու օրէնքդ պահեցի:
- 56 Այս եղած ինձի,
Վասն զի քու հրամաններդ կը պահեմ:

ԽԵԹ

- 57 Գուան իմ բաժինս ես, ով Տէր.
Ըսի որ քու խօսքերդ պահեմ:
Բայց ես բոլոր սրտով երեսդ ինդրեցի.
- 58 Բալօր սրտով քու երեսդ ինդրեցի.
Ողովմէ ինձի քու խօսքիդ համեմատ
- 59 Խմ ճամբաններուս վրայով մասձեցի,
Եւ իմ ստրերս քու վկայութիւններուդ գարձուցի:
- 60 Քու պատուիրաններդ պահելու
Արտօրացի ու չուշացայ:

- 61 Ամբարիշտներուն *խումբերը զիս պատեցին,
Բայց ես քու օրէնքդ չմոռցայ:
- 62 Կէս գիշերին կ'ելլում՝ քեզի գոհութիւն մաստուցանել
Քու արդար դատաստաններուդ համար:
- 63 Ես լնկեր եղայ այն ամէնուն սրոնք քեզմէ կը վախ-
նան,
- Ու քու հրամաններդ կը պահեն:
- 64 Ով Տէր, երկիր լեցուն է քու ողջրմութիւնովդ.
Սորվեցուր ինձի քու կանոններդ:

ԴԵՅ

- 65 Բարութիւն ըրիր քու ծառայիդ, ով Տէր,
Քու խօսքիդ համեմատ:
- 66 Բարի իմաստութիւն ու գիտութիւն սորվեցուր ինձի,
Վասն զի քու պատուիրանքներուդ հաւատացի:
- 67 Քանի որ վշտացած չէ՛ կը սիսոլէի,
Բայց հիմու քու խօսքդ կը պահեմ:
- 68 Բարի ես դուն ու բարերար,
Սորվեցուր ինձի քու կանոններդ:
- 69 Ամբարտաւանները ստութիւն հնարեցին ինձի դէմ,
Բայց ես բոլոր սրտով քու հրամաններդ պիտի պահեմ:
- 70 Անսնց սիրով ճարպի պէս պարարտացաւ,
Բայց ես քու օրէնքավիդ ուրախացայ:
- 71 Ովէկ եղած ինձի որ վշտացայ,
Որպէս զի քու կանոններդ սորվիմ:
- 72 Ինձի հազարաւոր սկիբէ ու արծաթէ
Աւելի աղէկ է քու բերնիդ օրէնքը

Ե Օ Տ

- 73 Զիս քու ձեռքերդ ըրին ու ստեղծեցին.
Խմասուն ըրէ զիս, որպէս զի քու պատուիրանքներդ
սորվիմ:
- 74 Քեզմէ վախցողները զիս պիտի տեսնեն և ուրախանան,
Վասն զի քու խօսիդ յաւացայ:
- 75 Գիտեմ, ալ Տէր, որ քու դասաստաններդ արդա-
րութիւնալ են,
Ու իրաւունքով զիս վշտացուցիր:
- 76 Հիմա թող քու ողպամութիւնդ ինձի միկթ արութիւն
ՌԱՎՈՒ
- Քու ծառայիդ բառած խօսիդ համեմատ:
- 77 Թող քու գիթութիւններդ իմ վրաս գան, որպէս զի
սորվիմ,
Վասն զի քու օրէնքդ իմ ուրախութիւնս է:
- 78 Ամբարտաւանները պիտի ամշնան,
Վասն զի տուանց պատճառի անիրաւութիւն ըրին
ինձի դէմ.
Բայց ես քու հրամաններուդ վրոյ պիտի մտածեմ:
- 79 Թող ինձի գտանան քեզմէ վախցողները
Եւ քու վկայութիւններդ ճանչողները:
- 80 Թող իմ սիրու կատարեալ ՌԱՎՈՒ
մէջ,
Այնպէս որ չամշնամ:
- Ք Ա Ֆ
- 81 Իմ անձո քու փրկութեանդ *կը կարօտի,

- Ու ես քու խօսիդ կը յուսամ՝
82 Իմ առչքերս քու խօսիդ համար կը նուազին,
Ըսելալ թէ Ե՞ր պիտի միկթ արեւ զիս:
83 Վասն զի ես ծուխի մէջ ՇՐԱՎ-ած արկի պէս եղայ,
Բայց քու կանոններդ չմուցոյ:
- 84 Ո՞րչոսի են քու ծառայիդ օրէրը.
Զիս հալածողներուն Ե՞ր դատաստան պիտի ընես:
85 Ամբարտաւանները փոսեր փորեցին ինձի համար,
Որ քու օրէնքիդ պէս չեն:
- 86 Քու բոլոր պատուիրանքներդ Ճշմարիս են.
Զուր տեղ զիս կը հալած են, օգնէ ինձի:
- 87 Վիչ մասց որ զիս կրանցնէին երկիր մէջ,
Բայց ես քու հրամաններդ վթողուցի:
- 88 Քու ողպամութեանդ համեմատ կենդանացուր զիս,
Եւ քու բերնիդ վկայութիւնը պիտի պահեմ:
- Ա Ա Ս Է
- 89 Ով Տէր, քու խօսիդ
Յաւիտեան հաստատ է երկինքի մէջ:
- 90 Քու հաւատարմութիւնդ աղդէ մինչև աղդ կը մնայ,
Դուռն հաստատեցիր երկիրը ու կը կենայ:
- 91 Քու հրամաններուդ պէս կը կենան գնչւ սյոր,
Վասն զի բոլորը քու ծառաններդ են:
- 92 Եթէ քու օրէնքդ իմ ուրախութիւնս չըլար,
Այն ասեն կրամաւած պիտի ըլայի իմ արտանութեանս
մէջ:
- 93 Յաւիտեան պիտի չմոռնամ՝ քու հրամաններդ,
Քանզի անոնցմանը կենդանացուցիր զիս:
- 94 Ես քուկդ եմ, փրկէ զիս,
Վասն զի քու հրամաններդ վինտեցի

95 Ամբարիշտաները ինձի սպասեցին, որպէս զի զիս կոր, սընցնեն,

Բայց ես քու վկայութիւններդ միտքս պիտի բերեմ:

96 Ամէն կատարելութեռն վերջը տեսոց.

Քու պատուիրանկդդ շատ ընդարձակ է:

Մ Ե Մ

97 Ո՞րչսափ կը սիրեմ՝ քու օրէնկդդ.

Այն է ամէն օր իմ մատածութիւնն:

98 Քու պատուիրանկներդ զիս իմ՝ թշնամիներէս իմաստուն ըրին,

Քանզի անոնք միշտ իմ՝ քովս են:

99 Իմ բոլոր աւատցիներէս աւելի համարեղ եղաց, վասն զի քու վկայութիւններդ իմ մատածութիւնն են:

100 Ծերերէն աւելի իմաստուն եղաց,

Վասն զի քու հրամաններդ պահեցի:

101 Ամէն գէշ ամամյայէ իմ սոքերս ես քաշեցի. Որպէս զի քու խօսքութահեմ:

102 Քու գատառառններէդ չխոտորեցայ, Վասն զի գուն սորվեցուցիր ինձի:

103 Ո՞րչսափ քաղցր է քու խօսքդ իմ՝ քիմքիս.

Մեղքէն աւելի անուշ է իմ բերնիս:

104 Քու հրամաններովդ իմաստուն եղաց, Անոր համար սութեան ամէն ճամբան ատեցի:

Ն Ո Ւ Յ

105 Քու խօսքդ իմ սոքերուս ճրադդ է,

Ու իմ՝ շուտիզներուս լոյս:

106 Երդում՝ ըրի ու պիտի կատարեմ:

Որպէս զի քու որդուր դատաստաններդ պահեմ, 107 Հասանելուցոյ:

Ու Տէր, կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ, 108 Հիմն իմ՝ բերնիս կամաւոր զոհերը ընդունէ, ով Տէր,

Ու քու գատառառններդ սորվեցուր ինձի:

109 Իմ հոգիս ամէն ժամանակ ափիս մէջ է,

Բայց քու օրէնկդդ չեմ մսանոր:

110 Ամբարիշտանները որոգովյթ լարեցին ինձի համար, Բայց ես քու հրամաններէդ չմնողուցոյ:

111 Քու վկայութիւններդ յափառեան ինձի ժառան, գութիւն առի,

Վասն զի անոնք իմ սրախ ցնծութիւնն են:

112 Խոնարհեցուցի իմ սիրտս, որպէս զի քու կանոններդ կատարեմ:

Յափառեան մինչեւ վերջը:

Ս Ա Մ Ե Խ

113 Երկմանները ատեցի,

Բայց քու օրէնկդդ սիրեցի:

114 Իմ սարուենս ու տապարս գուն ես.

Քու խօսքիդ յաւացոյ:

115 Ես քաշուեցէք ինձին, ով չարագործներ,

Վասն զի ես իմ Աստուծոյն պատուիրանկները պիսի պահեմ:

116 Պահպանէ զիս քու խօսքիդ համեմատ, որպէս զի ապրիմ:

Եւ զիս իմ յայսէս մի ալշնել:

117 Զօրացուր զիս օրպէս զի ապրիմ,

Ու միշտ քու կանոններուդ ու շադրութիւն ընեմ:

118 Անորդեցիր այն տմէնը որոնք քռւ կանոններէդ իսու
տարեցան,

Քանզի անոնց ննդութիւնը սոււա է:

119 Դուն ժբառապերու *կղկղանք կը համարիս" երկրի ըո-
լոր ամբարիշաները,

Անոր համար ես քռւ վկայութիւններդ կը սիրեմ:

120 Խմ մարմինս քռւ աչէդ դողաց,
Ու ես քռւ գտասաստաններէդ վախցայ:

Ա. Յ Խ Կ

121 Երաւանք ու արդարութիւն ըրի.
Զիս իմ նեղիչներուա մի մասներ:

122 Քու ծառապիդ բարութեան համար երաշխաւոր
եղիր.

Ամբարտաւանները չհարստահարեն զիս

123 Խմ աչքիրս նոււաղեցան քռւ փրկութեանդ համար
Ու քռւ արդարութեանդ խօսքին համար

124 Ըսէ քռւ ծառապիդ քռւ ողորմութեանդ համեմատ,
Եւ քռւ կանոններդ արվեցուը ինձի:

125 Ես քռւ ծառապի եմ, իմաստուն ըրէ զիս,
Որպէս զի քռւ վկայութիւններդ ճանշամ:

126 Տէրոջը բան տեսնելու ժամանակն է,
Վասն զի քռւ օրէնքդ խսիանեցին:

127 Անոր համար քռւ պատուիրանքներդ
Ոսկիէն ու ազնիւ ոսկիէն առելի սիրեցի:

128 Ռւատի ամէն բանի վրայովլ պարութան +ու բոլոր
Հրամաններդ ուղիղ կը համարիմ,
Ու սոսութեան ամէն ճամբան կ'ստեմ:

Փ է

129 Քու վկայութիւններդ զարմանալի են.
Անոր համար իմ անձս զամանք կը պահէ:

130 Քու խօսքերուդ յայտնուիլը լրյո կու տայ,
Ու միամիանները իմաստուն կ'ընէ:

131 Խմ բերանս բացի ու չեւացի,
Վասն զի քռւ պատուիրանքներուդ ցանկացայ.

132 Խնձի նոյէ ու ողբամէ ինձի:
Խնչչէս առլորաբար չ'ընէ քռւ անունդ սիրողներուն:

133 Խմ գնացքներս հաստատէ քռւ խօսքիդ մէջ:
Ու լնու անօրէնութիւն մը չտիրէ ինձի:

134 Փրկէ զիս մարդոց բանութենէն,
Եւ քռւ հրամաններդ պիտի պահէմ:

135 Երեսդ փայլեցուը քռւ ծառապիդ վրայ,
Ու արվեցուը ինձի քռւ կանոններդ:

136 Զուրերու առուներ կ'իջնէն իմ աչքերէս,
Վասն զի բարուէ քռւ օրէնքդ չպահեցին:

Ց Ա. Տ է

137 Արդար ես դուն, ով Տէր,
Եւ քռւ դաստատաններդ ուղիդ են:

138 Քու պատուիրած վկայութիւններդ
Արդար ու խիստ ճշմարիս են:

139 Խմ նախանձս զիս մաշեց,
Վասն զի իմ թշնամիներս քռւ խօսքերդ մոռցան:

140 Քու խօսքդ խիստ մաքուը է,
Անոր համար քռւ ծառապի զի սիրէ:

141 Ես ցած ու անարգուած եմ,

*կամ, կղկղանքի պէս մերժեցիր

Բայց քու հրամաններդ չմոռցայ:

142 Քու արդարութիւնդ յաւիտենական արդարութիւն է,

Ու քու օրէնքդ ճշմարտութիւն է:

143 Նեղութիւն ու վիշտ զիս գտան:

Բայց քու պատուիրանքներդ իմ ուրախութիւնս են:

144 Քու վկայութիւններուդ արդարութիւնը յաւիտեան է.

Խմսատուն ըրէ զիս, ու պիտի ապրիմ:

Գ Օ Ֆ

145 Բոլոր արտով աղաղակեցի,

Ավ Տէր, պատասխան տուր ինձի, ու քու կանոններդ պիտի պահեմ:

146 Փերի աղաղակեցի, փրկէ զիս,

Եւ քու վկայութիւններդ պիտի պահեմ:

147 Կանուխ ելոյ արշալցրին ու աղաղակեցի.

Քու խօսիդ յուսացայ:

148 Գիշերառն պահերէն առաջ բացուեցան իմ աչքերս.

Քու խօսիդ վրայ մոտած ելու համար:

149 Իմ ձոյնս լաւ քու ողբրմութեանդ համեմատ.

Ավ Տէր, քու գատառասաններուդ համեմատ կենդանացուր զիս:

150 Անօրէնութեան հետեւողները մօտեցան.

Անոնք քու օրէնքէդ հեռացան:

151 Ավ Տէր, գուն մօտ ես,

Ու քու ըսլոր պատուիրանքներդ ճշմարտութիւն են:

152 Առաջուրնէ իմացած եմ, քու վկայութիւններէդ,

Զորոնք յաւիտեան հաստատեցիր:

Ի Է Շ

153 Տես իմ խղճութիւնս ու զիս փրկէ,
Վասն զի քու օրէնքդ չմոռցայ:

154 Իմ իրաւունքս պաշտպանէ ու փրկէ զիս.
Քու խօսիդ համեմատ կենդանացուր զիս:

155 Փրկութիւնը Տեռու է ամբարփշտներէն,
Վասն զի քու կանոններդ չխնդրեցին:

156 Ավ Տէր, քու գիթութիւններդ շատ են.
Քու գատառասաններուդ համեմատ կենդանացուր
զիս:

157 Շատ են իմ հողածիքներս ու թշնամիներս,
Բայց ես քու վկայութիւններէդ չխստորեցայ:

158 Անօրէնութերը տեսայ ու զզուեցայ,
Վասն զի անոնք քու խօսիդ չեին պահեր:

159 Նոյն որ քու հրամաններդ կը սիրեմ'.

Ավ Տէր, քու ողբրմութեանդ համեմատ կենդանաց
ցուր զիս:

160 Քու խօսիդ *ակիզը ճշմարտութիւն է,
Ու քու բալը արդար գատառասաններդ յաւիտ
եան են:

Շ Ե Վ

161 Իշխանները զուր տեղ զիս հողածեցին,
Բայց իմ սիրառ քու խօսիդ վախցաւ:

162 Լու կրցնձամ' քու խօսիդրովդ,
Շատ տար գանողի պէտ:

163 Առութիւնը տաեցի ու անարգեցի

*Ա-ր բովանդակութիւնը

Բայց քու օրէնքդ սիրեցի,

164 Օրը եօթը անգամ՝ կ'օլչնեմ՝ քեզ,
Քու արդար դատաստաններուդ համար ։

165 Քու օրէնքդ սիրովներուն շատ խաղաղութիւն կայ,
Ու անոնց գայթակղութիւն ըլլար:

166 Ով Տէր, քու փրկութեանդ սպասեցի,
Եւ քու պատուիրանքներդ կատարեցի:

167 Իմ անձն քու վկայութիւններդ պահեց,
Ու ես զանանք շատ կը սիրեմ:

168 Քու հրամաններդ և քու վկայութիւններդ պահեցի,
Աշան զի իմ բոլոր ճամբաններս քու առջեւդ են:

ԹԱՎ

169 Ով Տէր, թող իմ՝ աղաղակս քու առջեւդ մօտենայ.
Քու խօսքիդ համեմատ իմաստուն ըրէ զիս:

170 Թող իմ՝ աղաղակս քու առջեւդ ելէ.
Քու խօսքիդ համեմատ փրկէ զիս:

171 Իմ շրթունքներս օրչնութիւն պիտի բղան,
Աշան զի քու կանոններդ արվեցուցիր ինձի:

172 Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատմէ,
Աշան զի քու բոլոր պատուիրանքներդ արդար են:

173 Թող քու ձեռքդ ինձի օգնուկան ըլլայ,
Աշան զի քու հրամաններդ ընտրեցի:

174 Ով Տէր, քու փրկութեանդ ցանկացայ,
Ու քու օրէնքդ իմ ուրախութիւնն է:

175 Թող իմ անձն ապրի ու քեզ օրչնէ,
Եւ քու դատաստաններդ օգնեն ինձի:

176 Կորսուած ոչխարի պէս մնջորեցայ.
Փնտուէ քու ծառադ, վասն զի քու պատուիրանք,
Ներդ չմնոցայ:

ՍԱՂՄՈՍ ՃԻ

Աստիճաններուն երգը:

- 1 **Իմ** նեղութեանս մէջ Տէրոջը աղաղակեցի,
Ու անիկաս ինձի պատուավան տուաւ:
2 Ով Տէր, փրկէ իմ՝ անձն սուտ շրթունքներէն
Ու նենդաւոր լեզուէն:
3 *Ով նենդաւոր լեզու, քեզի ի՞նչ արուի,
Եւ քեզի ի՞նչ աւելցուի.
4 Զօրաւոր մարդուն սուր նետերը
Ու գիշիին կոյծերը:
5 Վայ ինձի, որ Մոռաքի մէջ պանդուխտ եղայ,
Եւ կեդաքի վրաններուն քավերը ընակեցայ:
6 Շատ ժամանակ իմ անձս ընտրեցաւ
Խաղաղութիւնը ատողներուն հետ:
7 Ես խաղաղաւոր էի.
Բոյց երբ կը խօսէի, անոնք կուիւ վ՛ընէն:

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ

Աստիճաններուն երգը:

- 1 **Աչքերս գէպի լեռները պիտի վերցնեմ,**
Ուրիէ իմ օգնութիւնս պիտի գայ:
2 Իմ օգնութիւնս Տէրոջմէն է,
Որ երկինքը ու երկիրը սուեղծեց:
3 Անիկաս քու սուրդ չեղացնէ,
- *Կայ, Կենդաւոր լեզուն քեզի ի՞նչ կու տոյց ու քեզի
ի՞նչ կ'աւելցնէ

- Ու քու Պահապանդ չքնանայ:
- 4 Աչա Խարայէլի Պահապանը
Պիտի չմրափէ ու պիտի չքնանայ:
- 5 Տէրը քու պահապանդ է:
Տէրը քու աջ ձեռքից քով քու հավանիդ է:
- 6 Յունեկը արեգակը քեղ պիտի չզարնէ,
Ոչ ալ գիշերը՝ լուսինը:
- 7 Տէրը քեղ ամեն չարէն պիտի պահապանէ,
Քու անձդ պիտի պահապանէ:
- 8 Տէրը քու ելլերդ ու մանելդ պիտի պահապանէ
Ասկէ ետև մինչեւ յաւիտեան:

ՍԱԼՄՈՍ ՃԻԲ

Պատիթի ասափաններուն երգը:

- 1 Կ'ուրափանայի երբ ինծի կ'ըսէին,
Տէրոջը առանը երթանք:
- 2 Մեր սոքերը քու գոներուդ մէջ կայնեցան,
Ով երաւաղէմ:
- 3 Երաւաղէմ այնունիք քաղաքի մը պէս շնուռած է,
Որ ինքնիրեն միաւորուած է.
- 4 Որ ցեղերը, Տէրոջը ցեղերը հն կ'ելլեն
Խարայէլի պատուիրածին պէս,
Տէրոջը անուանը գոչութիւն մասուցանելու համար:
- 5 Վասն զի հն դրսւած էն դատաստանի աթոռները,
Պատիթի տանը աթոռները:
- 6 Երուաղէմի խաղաղութիւնը խնդրեցէք.
Թող յաջողին անոնք որ քեղ կը սիրեն:
- 7 Խաղաղութիւն թող ըլլոյ քու պարիսպներուդ մէջ,
Ու յաջողութիւն քու պալատներուդ մէջ:

- 8 Իմ եղբայրներուս ու ընկերներուս համար
Հիմն պիտի ըսեմ, Խաղաղութիւն ըլլոյ քու մէջդ:
- 9 Մեր Տէր Աստուծոյն տանը համար
Քեզի լարութիւն պիտի ուղեմ:

ՍԱԼՄՈՍ ՃԻԲ

Աստիճաններուն երգը:

- 1 Պիտի կը բարձրացնեմ իմ աչքերս,
Ով երկինքի մէջ Բնակող:
- 2 Աչա ինչպէս ծառաներուն աչքերը իրենց ակրոջը
ձեռքին ընացնա:
- Ու ինչպէս աղախինին աչքերը իր տիկնոջ ձեռքին,
Այնպէս մեր աչքերը Տէրոջը, մեր Աստուծոյն, ուրդէ
նացնա:
- Մինչեւ մեզի սղումի:
- 3 Ուզոմէ մեզի, ով Տէր, ողբանէ մեզի,
Վասն զի խիստ լեցուեցանք անարդանքով,
- 4 Խիստ լեցուած է մեր անձը հոնդիսա վոյելովներուն
նսխանինքովը
- Ու ամիսրտաւաններուն անտրգտնքովը:

ՍԱԼՄՈՍ ՃԻԲ

Պատիթի ասափաններուն երգը:

- 1 Եթէ Տէրը մեզի հետ չըլլոր,
Հիմն Խարայէլ թող ըսէ,
- 2 Եթէ Տէրը մեզի հետ չըլլոր,
Երբ մարդիկ մեր վրոյ ելոն,
- 3 Այն ատեն ողջ ողջ պիտի կլէին մեզ,

- Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բորբսքած էր.
 4 Ա.յն աստեն ջուրերը մեզ պիտի ընկղմին,
 Հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր.
 5 Ա.յն աստեն հպարտացած ջուրերը
 Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին:
 6 Օրչնեալ ըլլայ Տէրը,
 Որ մեզ անոնց ակւաներուն որս չտուաւ:
 7 Մեր անձերը ճնճղուկի պէս որսորդներուն որոգոյ-
 թէն աղատեցան.
 Որոգոյթը կարեցաւ ու մենք աղատեցամկաւ
 8 Մեր օգնութիւնը Տէրողը անունովն է,
 Որ երկնքն ու երկիրը ատեղծեց:

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Աստիճաններուն երգը:

- 1 Տէրողը յուսացողները Ախօն լեռանը պէս են,
 Որ չսասանիր, հապա յաւիտեան կը մնայ:
 2 Խաշեա Երուսաղեմ լեռներով պատաժ է,
 Նշաղեա Տէրը իր ժաղովարդին չորս կողմն է
 Ասկէ ետև մինչեւ յաւիտեան:
 3 Վասն զի ամբարիշտին դաւազանը արդարներուն վի-
 ճակին վրայ պիտի չմնայ,
 Որովէս զի արդարները ձեռքերնին անօրէնութեան
 չերկնցինեն:
 4 Ով Տէր, բարիք ըրէ բարիներուն
 Ու սրտով ուղիղներուն:
 5 Սակայն զաննիք որ իրենց ծուռ ճամփաներուն մէջ
 կը մոլորին,

- Տէրը պիտի *կորսնցնէ անօրէնութիւն գործողներուն
 հետո:
 Խաղաղութիւն ըլլայ Խարապէկի վրայ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Աստիճաններուն երգը:

- 1 Երը Տէրը Սիմի գերութիւնը դարձուց,
 †Երաղ տեսնողներու՝ պէս եղանկի:
 2 Ա.յն ժամնանակ մեր բերանը խնդութիւնով լցուե-
 ցաւ,
 Ու մեր լեզուն ցնծութիւնով,
 Ա.յն ժամնանակ չէթ անսաներուն մէջ ըսին թէ
 Տէրը ասանց համար մեծ բաներ ըրաւ,
 3 Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ,
 Ու մենք ուրախացանք:
 4 Ով Տէր, գարձուր մեր գերութիւնը
 Հարաւի տառաներուն պէս:
 5 Անոնք որ արցունքով կը ցանեն,
 Ցնծութիւնով կը չնձեն:
 6 Ան որ լուղալ կ'երթայ,
 Յանելու սերմը ասմանելով,
 Անշուշտ ցնծութեամբ ետ պիտի դառնայ,
 Իր շահնիք խուրձերը բերելով:

*Եբբ. ասանի

†Կամ, Առողջացողներու-

ՍԱՂՄՈՍ ՃԻՒ

Սոզմոնի աստիճաններուն երգը:

- 1 Եթէ Տէրը չինէ տունը,
Զուր տեղ կ'աշխասալին անոր շինողները,
Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը,
Զուր տեղ կը հակեն պահպանները:
- 2 Պարապ բան է ձեզի համար կանուխ ելելլ և ուշ
Հանդշելը
Ո-ցաւով հաց ուտելլէ:
Արդարե անիկա իր սիրելիին քուն կու տայ,
- 3 Ա.Հա տղաքը Տէրը ժաւանդութիւնն են.
Որովայնի պատով անոր *պարգեւն է:
- 4 Խնչպէս են նետերը զօրաւորին ձեռքին մէջ,
Այնպէս են երիտասարդներուն տղաքը:
- 5 Երանի՛ այն մարդուն,
Որ իր կապարճը անոնցմով լեցուց.
Երբ դրանը մէջ [թշնամիներուն հետ խօսելու ըլլան,
Պատի չաշնան:

ՍԱՂՄՈՍ ՃԻՒ

Աստիճաններուն երգը:

- 1 Երանի՛ այն ամենուն՝ որոնք Տէրոջմէ կը վախնան,
Ո-անոր ճամփաներուն մէջ կը քալեն:
- 2 Վան զի քու ձեռքիդ աշխատութիւնը պիտի ուտես.
Երանի՛ է քեզի, ու քեզի բարի պիտի ըլլայ:
- 3 Քու կինդ պաղպարեր որթի մէ պէս պիտի ըլլայ

*կո-ժ, վարձքն

- Քու ատմադ ներսիդիերը,
Ո-քու որդիները ձիթենիի ատմակերու պէս
Քու սեղանիդ չորս կողմէն:
4 Ա.Հա Տէրոջմէն վախցող մարդը
Այսպէս պիտի օրչնուի:
5 Տէրը քեղ Ախոնէ օրչնէ,
Ու Երանաղէմի բարութիւնը տեսնես
Քու կետնիդի բոլոր օրերուն մէջ.
6 Եւ քու որդւոցդ որդիները տեսնես
Խաղաղութիւն ըլլայ խրայէլի վայս:

ՍԱՂՄՈՍ ՃԻՒ

Աստիճաններուն երգը:

- 1 Հիմա խարայէլ թող ըսէ,
Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ զիս նեղեցին.
- 2 Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ զիս նեղեցին,
Բայց հնձի չյաղթեցին:
- 3 Հերկողները իմ կանակիս վրայ հերկեցին,
Ո-իրենց ակօնները երկնցոցին,
- 4 Տէրը որդար է.
Անիկա ամբարիշոներուն չուտնները կորտեց:
- 5 Ախոնը ասողներուն ամենը
Պիտի ամշնան ու եռ դառնան.
- 6 Տանիկի վրայի խոտին պէս պիտի ըլլան,
Որ գեռ չփրցուած կը չորնայ.
- 7 Որով չնձորը չկրնար իր ձեռքը լեցնել,
Ու այ խուրձ կապողը իր գողը.
- 8 Եւ անցնողները չեն ըսեր թէ

Տէրոջը օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ,
Ո- ձեզ Տէրոջը անունովը կ'օրհնենք:

ՍԱՂՄՈՍ ՃԼ

Աստիճաններուն երգը:

- 1 Խորունկ տեղերէն քեզի կանչեցի, ով Տէր:
- 2 Ով Տէր, իմ ձայնա լուէ:
Քու ականջներդ թող մափկ ընեն իմ աղօթքիս ձայնը:
- 3 Ով Տէր, եթէ անօրէնութիւնները յիշելու ըլլաս,
Տէր, ով կրնայ կենալ:
- 4 Բայց քու քսիդ է թաղութիւնը,
Արագէ զի քեզիւ վախնան:
- 5 Ես Տէրոջը կը սպասեմ, իմ անձս կը սպասէ,
Ու անոր խօսին կը յուսում:
- 6 Առառուան սպասողներէն, առառուան սպասողներէն
առելի:
Իմ անձս Տէրոջը և սպասէ:
7 Խորոյշէ թող Տէրոջը յուսոյ,
Վասն զի Տէրոջը քով ողորմութիւն կայ.
Ու անոր քով շատ փրկութիւն կայ.
- 8 Եւ անիկա սփափի փրկէ Խորոյշէլը
Իր բոլոր անօրէնութիւններէն:

ՍԱՂՄՈՍ ՃԼ.Ա.

Դասիթի աստիճաններուն երգը:

- 1 Ով Տէր, իմ սփափ չգուսղացաւ,
Եւ իմ աչքերս չբարձրացան.
Ու ես մեծամեծ բաներու մէջ,

- Եւ ինձմէ բարձր բաներու մէջ չքալեցին
2 Արդարե իմ անձս չանդարտեցուցի ու չանդատա-
ցուցի
Իր մօրը կաթէն կարուած աղու մը պէս.
Իմ անձս կաթէն կարուած աղու մը պէս է:
3 Խորոյշէ թող Տէրոջը յուսոյ
Ասկէ եաւ մինչե յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ ՃԼ.Բ

Աստիճաններուն երգը:

- 1 Դասւիթի չամար յիշէ, ով Տէր,
Անոր բոլոր նեղութիւնը.
- 2 Որ երգում ըրաւ Տէրոջը,
Եւ ուսիս դրաւ Յակոբի Զօրաւորին,
- 3 Էսէլ թէ Իմ տանս բնակարտնը չմտնեմ,
Ու իմ փոռած անկողինս վրայ չելլեմ,
- 4 Թէ իմ աչքերուա քուն՝
Եւ արտեւանունկներուս նիրհում չտամ,
- 5 Մինչե Տէրոջը չամար տեղ մը դմենմ,
Ու Յակոբի Զօրաւորին չամար բնակարտն:
- 6 Աչս անոր վրայով լուշինք Եփրաթայի մէջ,
Եւ զանիկա գտանք անտառի գաշտերուն մէջ:
- 7 Մանենք անոր բնակարտները,
Ու երկրպագութիւն ընենք անոր պատուանդանին
քովւ:
- 8 Քու չանդատութեանդ ուշէ ելիր, ով Տէր,
Գուն ու քու զօրութեանդ տապանակը:
- 9 Քահանաներդ թող արդարութիւն չագնին,
Եւ քու սուրբերդ ցնծան:

10 Քու Դաւելիթ ծառայիդ համար

Անդին մի դարձներ քու օծեալիդ երեսը;

11 Տէրը Երգում ըրաւ Դաւելիթի ծշմարտութեամբ,

Ու ես չգաւանար անկէ,

Թէ Քու որավայնիդ պատուղէն

Քու աթոռիդ վրայ պիտի նատեցնեմ,

12 Եթէ քու որդիներդ պահեն իմ ուխտու ու վկայու-
թիւններս

Զորոնիք անանց պիտի առվեցնեմ,

Ան ուրիշ անանց որդիներն ալ

Քու աթոռիդ վրայ պիտի նատին յաւիտեան,

13 Վասն զի Տէրը Սիօնը ընտրեց,

Եւ զանիկա իրեն բնակութեան համար սւզեց,

14 Ըստւշ, Սյու է յաւիտեան իմ հանդիսաս.

Ասոր մէջ պիտի բնակիմ, վասն զի ասիկա սւզեցի,

15 Անոր պաշատը առատապատը պիտի օրջնեմ,

Ու անոր աղքատաները հացալ պիտի կշապնեմ,

16 Եւ անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագ-
ցլեմ.

Ու անոր սուրբերը ուրախութեամբ պիտի ցնձան.

17 Սյու աեղը Դաւելիթի եղիսւր պիտի բուացնեմ,

Ու ճրագ պիտի պատրաստեմ իմ օծեալիս համար.

18 Անոր թշնամիներուն ամօթ պիտի հագցնեմ,

Բայց անոր վրայ իր թագը պիտի ծաղկի

ՍԱՂՄՈՍ ՃԼԿ

Դաւելիթի աստիճաններուն երգը:

1 Սահա ուրչափ բաղի ու ուրչափ վայելու է

Որ եղայլները իւրառ հետ միաբանութեամբ բնակին:

2 Սոյն աղնիւ իւղին պէս է,

Որ գիւսուն վայցւն մօլուքին վասյ,

Աշարոնի մօրուքին վրայ, վաղեց,

Ու մինչեւ անոր զգեաներուն ծայրը իջաւ:

3 Սիօնի լեռներուն վրայ իջած

Հերմինի շաղին պէս է.

Վասն զի Տէրը հան հաստատեց օրջնութիւնը

Ու կեանքը մինչեւ յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ ՃԼԴ

Աստիճաններուն երգը:

1 Սոյէ, օրջնեցէք Տէրը, ով Տէրոջը բոլոր ծա-
ռաները,

Որ Տէրոջը առոնը կը կենաք գիշերները:

2 Սուրը տեղը ձեռքերնիդ վեցուցէք,

Ու օրջնեցէք Տէրը:

3 Երկինքը ու երկիրը առեղծու Տէրը

Թող օրջնէ քեզ Սիօնէ:

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ

1 Սոյէլուիտ Օրջնեցէք Տէրոջը անունը,
Օրջնեցէք, ով Տէրոջը ծառաները,

2 Որ Տէրոջը առոնը կը կենաք,
Մեր Աստիճան տանը սրահներուն մէջ:

3 Օրջնեցէք Տէրը, վասն զի Տէրը բոլի է,

Սաղման ըսէք անոր անուանը վասն զի քաղցր է,

4 Վասն զի Տէրը իւրեն համար բնարեց Յակոբը,

Ու Խարայէլը իւրեն սեպհական Քուշ-Հ-Ռ ըլլալու,

5 Վասն զի ես իմացայ, որ Եհուլս մեծ է,

- Ու մեր Տէրը՝ բոլոր աստուածներէն։
 6 Տէրը ամէն ինչ որ ուզեց՝ ըրաւ,
 Երկինքի ու երկի մէջ,
 Ծովերուն ու բոլոր անդունուներուն մէջ։
 7 Երկի ծայրերէն շագիներ կը հանէ,
 Անձմեւի համար փայլակներ կը շնէ,
 Ու հով կը հանէ իր շահմարաններէն։
 8 Անիկա Եղիպատոսի առջնեկները զարկաւ
 Մարդէ մինչև անսառն։
 9 Նշաններ ու հրաշքներ զրկեց քու մէջտ, ով Եղիպատոս,
 Փարաւանի ու անոր բոլոր ծառաներուն վրայ։
 10 Շառ ազգեր զարկաւ,
 Ու զրեղ թագաւորներ ապաննեց։
 11 Ամօրհացւոց Անհոն թագաւորը,
 Բասանի Ովդ թագաւորը,
 Եւ Քանանաւ բոլոր թագաւորութիւնները։
 12 Ու աննաց երկիրը ժառանգութիւն տուաւ,
 Իր Խորոյէլ ժաղովարդին ժառանգութիւն։
 13 Ով Տէր, քու անունդ մինչև յաւիսեան է հայ։
 Ով Տէր, քու յիշանակդ ազգէ մինչև ազգ։
 14 Վասն զի Տէրը իր ժողովուրդը կը դատէ,
 Եւ իր ծառաններուն կ'ողորմի։
 15 Հեթանաններուն կուռքերը արծոթ ու ոսկի են,
 Մարդու ձեռքի գոգերը են։
 16 Բերան ունին, բայց չեն խօսիր.
 Աչքեր ունին, բայց չեն տեսներ.
 17 Ականջներ ունին, բայց չեն լսեր,
 Ու շունչ չկայ անսնց լերնին մէջ։
 18 Անմից նման կ'ըլլան զանանք շինողները
 Ու բոլոր անսնց յաւսացողները։

- 19 Ով Խորոյէլի առւնը, օրչնեցէք Տէրը.
 Ով Ահարանի առւնը, օրչնեցէք Տէրը.
 20 Ով Կեւի առւնը, օրչնեցէք Տէրը,
 Ով Տէրոջմէն վախցողներ, օրչնեցէք Տէրը։
 21 Օրչնեալ ըլլայ Տէրը Ախոնէ,
 Որ Երաւաղէմի մէջ կը բնակի: Օճէլուկա:

ՍԱՂՄՈՍ ՃԼ.9

- 1 Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 2 Գոհացէք աստուածներուն Ասպուծմէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 3 Գոհացէք աւերերուն Տէրոջմէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 4 Մինակ մեծ հրաշքներ լնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 5 Երկինքը իմաստութեամբ ստեղծողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 6 Երկիրը ջուրերուն վրայ տարածողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 7 Մեծամեծ լուսաւորներ ստեղծողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 8 Արեգակը՝ օրակս զի ցորեկին իշխե,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 9 Լուսինը ու աստղերը՝ օրակս զի գեշերն իշխեն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիսեան է.
 10 *Եղիպատոց անդրանիկները՝ զարնողէն,

*Եբք. Եղիպատոցիները իրենց անդրանիկներուն մէջ

- Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 11 Ու Խորայէլլ անոնց մէջէն հանողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 12 Հզօր ձեռքքով ու ատրած աւած բաղզւկով,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 13 Կարմիր ծավալ երկու քի բաժնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 14 Ու Խորայէլլ անոր մէջէն անցընողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 15 Եւ Փարաւոնը ու անոր զօրքերը Կարմիր ծավան մէջ
 թօթ վաղէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 16 Եր ժաղավարքը անսպասին մէջ պարացնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 17 Մեծ թագաւորներ զարդողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 18 Ու զրել թագաւորներ սպաննողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 19 Ամօրհացւոց Սեհմն թագաւորը,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 20 Ու Բասանի Ուգ թագաւորը,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 21 Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 22 Եր Խորայէլ ժառային ժառանգութիւն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 23 Մեր խոնարհութեանը մէջ մէզ յիշողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 24 Ու մեր թշնամիներէն մէզ փրկողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.

- 25 Բողոք մարմինի հաց առւողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 26 Գոհհացէք երկինքի Աստուծմէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է:

ՍՈՂՄՈՍ ՃԵ

- 1 **Բ**արելոնի գետերուն քով հոն կը նատէնք,
 Ու Ախօնը միաքերնես բերելով կու լսցինք:
 2 Անոր մէջ ուռիներուն վրայ
 Կափեցնիք մեր քնարները,
 3 Վասն զի մեզ գերի ընողները
 Հնա մերզի երդ մը խնդրեցին,
 Ու մեր *կողապահները ու բախութիւն,
 Ըսէւկ, երգեցէք մեզի Ախօնի երգերէն:
 4 Տերոջը երգը ի՞նչպէս երգենք
 Օտար երկի մէջ:
 5 Ու Երսասաղէմ, եթէ քեզ մանամ,
 Թողլ իմ աջ ձեռքս է՛ գուշտն մոռնայ.
 6 Թողլ իմ լեզուս իմ քիմքիս փակչի,
 Եթէ քեզ չի լեզ,
 Եթէ Երսասաղէմ իմ գլխաւոր ու բախութենէս
 Աւելի մեծ չշամարիմ:
 7 Ցիէշ, ու Տէր, Երսաղիս որդիները
 Երսասաղէմի օրուոնը մէջ,
 Որոնք կ'ըսէին, Փլցուցէք, Փլցուցէք
 Մինչև անոր հիմը

*կոմմ. գերեվարները

- 8 Ով Բաղրելոնի *աւեբող աղջիկը,
Ելոնի՛ անոր՝ որ քեզի կը հաստացանէ
Մեղի ըրած գործերուդ փախարէնը.
9 Երանի՛ անոր՝ որ քու զաւակներդ կը բռնէ
Ու քարի կը զարնէ:

ՍԱՂՄՈՍ ՃԼՅ

ՍԱՂՄՈՍ ԴԱՏԻ

- 1 **Փեղի** գոհութիւն պիտի մաստացանեմ՝ իմ բոլոր
պատվաւ.

†Աստուածներուն առջև քեղի սաղմոն՝ պիտի երգեմ:
2 Երկրագութիւն պիտի ընեմ՝ դեպի ի քու սուրբ
տաճորդ,

Եւ քու անուտնդ գոհութիւն պիտի մաստացանեմ՝
Քու ողբարձութեանդ ու ճշմարտութեանդ համար.
Վասն զի քու բոլոր անունէդ վեր մեծցուցիր քու
խօսքի:

- 3 Կանչած օրս պատափան տուիր ինձի,
Իմ անձին մէջ զօրութիւնալ զիս ուժովցուցիր:
4 Ով Տէր, երկրի բոլոր թագուարները քեղի գոհութիւն
պիտի մաստացանեն,

Երբ քու բերնիդ խօսքերը լսեն.

- 5 Ով Տէրոյի՛ ծամբաներուն մէջ պիտի երգեն.
Վասն զի Տէրոյի՛ փառքը մէծ է:

*կամ, աւրուելու. Ես, ժդ. 1, 6, ևն խէ. 1: Երեմ:
իւ. 12: ծ. 2:

†կամ, Հրեշտակներուն, իւմ, Պատաւարներուն, և իւմ,
Աստուծոյ

- 6 Թէպէտ Տէրը բարձր է, բայց խոնարհը կը տեսնէ,
Ու բարձրամիալ հեռութեն կը ծանչնայ:
- 7 Եթէ նեղութեան մէջ ալ քոլեմ,
Դուն զիս պիտի կենդանացնես,
Իմ թշնամինելուս բարկութեանը գէմ
Քու ձեռքդ պիտի երկնցնես,
Եւ քու աջ ձեռքդ զիս պիտի փրկէ:
- 8 Տէրը պիտի գործէ ինձի համար.
Ով Տէր, քու ողբարձութիւնդ յաւիտեան է.
Քու ձեռքիդ գործերը երեսէ մի ձգեր:

ՍԱՂՄՈՍ ՃԼՅ

Գլխաւոր երաժշախին, Սաղման Դաւթի

- 1 **Ու** Տէր, զիս քննեցիր ու ծանցար:
2 Դուն գիտես իմ նատիլս ու ելլելս,
Իմ խորհուրդս հեռուանց կիմնասաւ:
3 Իմ շատիլս ու պառկիլս կը քննես,
Ու իմ բոլոր ճամբաներս գիտես:
4 Վասն զի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ,
Աչա, ով Տէր, դուն ամենիլ գիտես:
5 Իմ ետեւէս ու առջեւէս զիս պաշտրեցիր,
Եւ քու ձեռքդ իմ վրաս դրիր:
6 Այս գիտութիւնը ինձի իխաս զարմանափէ է,
Բարձր է ու չեմ կինար հասկանալ զանիկան:
7 Ուր երթամ քու Հագիեդ,
Եւ քու երեսէդ ուր փափչիր:
8 Եթէ երկինք ելլեմ, դուն հան ես,
Եթէ գտոփաք անկողինն ընեմ, ոչ ու դուն հան ես,
9 Եթէ արշալցափն թեւերը առնեմ:

- Եւ ծովառն վերջի ծայրը ընտկիմ։
 10 Հսն ալ քու ձեռքդ ինձի պիտի առաջնորդէ,
 Ու քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ։
 11 Եթէ ըսեմ, իրաւցնէ խաւարը զիս պիտի ծածկէ,
 Այս որեւ գիշերն ալ լցու կ'ըլլայ իմ՝ բոլորափա։
 12 Սութն ալ քեզի խաւար չէ։
 Հապս գիշերը ցորեզի պէս լուսաւոր կ'ըլլայ.
 Խաւարը և լցուը միևնոյն բան են ուս ուշ-ու։
 13 Վասն զի գուն սահեղձեցիր իմ՝ երիկամնաքններս,
 Ու իմ մօրս որովայնին մէջ գուն զիս ծածկեցիր։
 14 Կը գոհանամ քեզմէ,
 Որ ահաւոր ոս զարմանալի կերպով սահեղձուեցայ.
 Քու գործերդ զարմանալի են,
 Ու իմ անձս աղէկ գիտէ։
 15 Խմ գոյութիւնս չծածկուեցաւ քեզմէ,
 Երբ գալուուկ տեղը շինուեցայ,
 Երկիր խորութիւններուն մէջ ժճարտարութեամբ
 կազմուեցայ։
 16 Քու աչքերդ իմ անկատար կազմուածքս տեսան։
 Ու անդամնեւու բոլորը քու գիրքիդ մէջ դրուած էին,
 Ու անդ ժամանակին պիտի կազմուէին,
 Երբ գեռ տնտեցմէ մէ՛կը չկար։
 17 Ո՛չչափ պատուական են ինձի քու խորհուրդներդ,
 ով Աստուած։
 Ո՛Ռչափ մեծ է անոնց թիւը։
 18 Եթէ համրեմ զանոնք՝ աւազէն շատ են։
 Երբ արթնամ գեռ քեզի հետ եմ։

*Ասմէ, սոտացար
 +Եբբ, նկարակերպեցայ

- 19 Իրաւցընէ ամբարիշար պիտի սպաննես, ով Աստ
 ուած։
 Ուրիշն, ով արիւնաչէզ մարդիկի հւատացէք ինձմէ։
 20 Անոնք քեզի գէմ նենգութեամբ կը խօսին,
 Ես՝ քու ժըշնամիներդ ուս ուսունդ պարապ տեղ
 կ'առանեն։
 21 Քեզ ատաղները չե՞մ ատեր, ով Տէր,
 Ու քեզի դէմ ելլողներէն չե՞մ զզուիր։
 22 Զանոնք կասարեալ սասելութեամբ կ'ատեմ,
 Ես ինձի թշնամի կը համարիմ։
 23 Փորձէ զիս, ով Աստուած, ու գիտցիր իմ պիտա։
 Զիս քննէ ու գիտցիր իմ մատածունեներս,
 24 Եւ նայէ թէ արդեօք չսոր ճամփու մէ՛ջ եմ,
 Ես զիս գէպի յաւիտենական ճամփան տառաջնորդէ։

ՍՈՂՄՈՍ ՃԽ

Գլխաւոր երաժշտին, Ստուգոս Դաւթի։

- 1 Ով Տէր, չսր մարդէն զիս փրկէ,
 Ու բռնաւոր մարդէն զիս պահէ,
 2 Որոնք պատերնուն մէջ չսր բաներ կը մոտածեն,
 Ու ամէն օր կափներու համար կը ժողվուին։
 3 Երեսց լեզուները օձի պէտ սրեցին.
 Իժի թոյն կայ անենց շրմաներներուն տառկ (Աւելու)
 4 Ով Տէր, զիս ամբարշտին ձեռքէն պահէ։
 Զիս բռնաւոր մարդէն պահպանէ,
 Որոնք իմ դնացքներս խսփանելու խորհուրդը ըրին։

*Ասմէ, քաղաքներդ անիրաւութեամբ կ'առանեն

- 5 Ամբողութաւանները ինծի համար գաղտնի որսդայթ ու չուաններ լարեցին.
- Ուռեկան փոեցին էմ ճամշաւս վրայ.
- Վարժեր քրին ինծի համար (Սէլաւ)
- 6 Ըսի Տէրոջը, Գուն ես իմ Աստուածս.
- Ու Տէր, լու իմ աղաշանքիս ձայնը:
- 7 Ու Տէր ԵՇովա, իմ փրկութեանս զօրութիւնը,
Գուն իմ գլխաւս հովանին եղար պատերազմին օրը:
- 8 Ու Տէր, ամբարջանին ցանկութիւնները մի տար,
Անոր չար խորհուրդը մի յաշողեր,
Որ ռւզաւ նե բարձրանան: (Սէլաւ)
- 9 Զիս պաշարողներուն գլուխը
Կրենց շրթունքներուն աշխատութիւնը պիտի ծածկէ:
- 10 Վառած ածուխներ պիտի իշնան անոնց վրայ.
Կրակի մէջ պիտի ձգէ զանոնք,
Ու խորունկ ջուրերու մէջ, որպէս զի լնաւ վեր չեկեն:
- 11 Զարախօս մարդը երկրի վրայ պիտի չչաստատուի,
Թշուառութիւնը պիտի որսայ բանաւոր մարդը,
Որպէս զի պահիտ կործանէ:
- 12 Գիտեմ որ Տէրը դատաստան պիտի ընէ խեղձին,
Ու իրաւունք՝ աղքատներուն:
- 13 Ցիրաւի արդարները քու անունդ պիտի գովիւն.
Ուղիղները քու առջեւդ պիտի բնուկին:

Ա.Ղ.ՄՈՍ ՃԽԱ

Սարմա Գառթի

- 1 Ու Տէր, քեզի կը կտնչեմ, շուտով չափի ինծի.
Ականջ գեր իմ ձայնիս երբ քեզի կը կանչեմ:
- 2 Թող իմ աղօթքու խունկի պես քեզի շխտկուի,

- Եւ իմ ձեռքերուս վեր վերցուիլը՝ իրիկուան պատա-
րագին պէս:
- 3 Ու Տէր, պահապան գեր իմ բերնիս,
Ու իմ շրթունքներուս գուռը պահապանէ:
- 4 Իմ սիրտ չար լանին ետեւէ խսորելու մի թողուր,
Որպէս զի անօրէնութիւն գործող չետ գէշ
գործեր չընեմ:
- Ու անոնց համագամ կերակուներէն չլուտեմ:
- 5 Արդարը թող զիս զարնէ, այն ողբրմութիւն է.
Եւ զիս յանդիմանէ, այն գիշու իւղ է.
Իմ գլուխս չմերծէ պահիտ.
Վասն զի անոնց նեղութիւններուն մէջ աւ պիտի
աղօթեմ:
- 6 Երբ անոնց գատաւորները ապառաժներու մէջ ձըդ-
ուին,
Այն ատեն իմ խօսքերս պիտի լսեն, վասն զի քաղցր են:
7 Ինչպէս *չերկարը ու ճեղքողը լւ ցրւե երկրի վրայ,
Այնպէս մեր առկորները գերեցմանին բերանը ցիրուցան
եղան.
- 8 Սակայն, ու Տէր ԵՇովա, իմ աչքերս դէպի քեղեն.
Քեզի յուսացայ, իմ չոգիս մի մերկացներ:
- 9 Ինծի համար լարուած որսդայթէն,
Ու անօրէնութիւն գործողներուն վարմերէն զիս
պահչէ:
- 10 Ամբարիշանները իրենց ցանցերուն մէջ պիտի իշնան,
Երբ ես բոլորովին անցնիմ:

ՍԱԼԻՄՈՍ ՃԽԲ

Դաւեիթի երգը ու աղօթքը՝ երբ ինք այլին մէջ էր՝

1 իմ ձայնավա Տէրոջը կ'աղաղակեմ։

իմ ձոյնովս Տէրոջը կ'աղաղակեմ։

2 իմ գանգատա անոր առջե կը թափեմ։

իմ նեղութիւնս անոր առջե կը պատմեմ։

3 Երբ հոգիս իմ՝ մէջո կը մարեր,

Դուն իմ՝ շաւիզո գիտցար։

իմ քալած ճամփուս մէջ։

ինձի համոր գաղոսուկ որոգայիթ լորեցին։

4 Նոյէ աջ կողմու ու տես,

Որ բնաւ զիս ճանցող մը չկոյ։

Ապաւէնը ինձմէ կրտսուեցաւ։

Բնաւ մէկը չկոյ որ իմ անձիս համոր հոգ ընէ։

5 Ով Տէր, քեզ աղաղակեցի,

Ու ըսի, Դուն ես իմ ապաւէնս,

Ե- իմ վիճակս կենդանիներուն երկրին մէջ։

6 Ականջ դիր իմ աղաղակիս,

Վասն զի շաս նուսասացայ։

Ազսուէ զիս իմ՝ հալածիչներէս,

Վասն զի ինձմէ զօրսուոր են։

7 Իմ անձա բանաէն հանէ,

Որպէս զի քու անսաւադ գոհութիւն մասուցանեմ։

Արդարները իմ չըս կողմու պիտի պատեն,

Երբ ինձի բարութիւն ընես։

ՍԱԼԻՄՈՍ ՃԽԲ

Սաղմոս Դաւիթի։

1 Ու Տէր, լսէ իմ աղօթքս,
Ականջ դիր իմ աղաղանքիս։

Պատասխան տուր ինձի քու ճշմարտութիւնովդ։

Ու քու արդարութիւնովդ։

2 Եւ քու ծառայիթ հետ գատաստանի մի մոներ,
Վասն զի բնաւ կենդանի մը պիտի չարդարութ քու
առջեւդ։

3 Վասն զի թշնամին իմ անձս հալածեց,
իմ կեանքս գետինը զարկաւ,

Զիս շասունցունէ մեռածներուն պէս

Մութը նատեցուց։

4 Եւ իմ հոգիս ներսիգիս մորեցաւ,
իմ սիրոս ներսիգիս խուռվեցաւ։

5 Առաջուան օրերը կը միշեմ,
Քու բալը զործերուդ վասյ կը մոածեմ.
Քու ձեռքերուդ ըրածներուն վրոյ կը խորհիմ։

6 Զեռքերս գէպի քեզ կ'երկնցնեմ.
իմ անձս չոր երկրի պէս քեզի էւ հորտա-էւ։ (Աէլու)

7 Շուտով պատասխան տուր ինձի, ու Տէր.
իմ հոգիս մարեցաւ.

Քու երեսդ մի ծոճկեր ինձմէ,

Որպէս զի գուրը իշխողներուն պէս չըլլամ։

8 Առասւանց քու ողբաժնեթիւնդ ինձի լսել տուր,
Վասն զի քեզի յուսացայ։

իմ երթալու ճամբաս ինձի ցուցուոր,

Վասն զի իմ անձս գէպի քեզ վեցուցի։

- 9 Ով Տէր, քրկէ զիս իմ թշնամիներէս,
Վասն գէ քեր իմ ապաւենս ըրիս
10 Արքլեցուր ինծի որ քու կամքդ ընեմ,
Քանզի դուն ես իմ Ապաւածն.
Թող քու բարի Հոգիդ զիս ուղիղ երկիրը առաջնորդէ:
11 Ով Տէր, քու անտւանդ համոր կենդանացուր զիս.
Քու արդարութեանդ համոր իմ անձս նեղութենէ
հանէ:
12 Եւ քու ողբրմնւթիւնովդ սասկեցուր իմ թշնամիներս,
Ու կորսնցուր բոլոր իմ անձս վշտացնողները,
Վասն զի ես քու ծառադ եմ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ

Սույն Դաւթիւ

- 1 Օրչնեալ ըլլայ Տէրը, իմ Աէմս,
Որ իմ ձեռքերս մարտնչելու կը վարժէ,
Ու իմ մատերա՝ պատերազմելու:
2 Անիկա է իմ ողբրմնւթիւնս ու պարիսպս,
իմ ապաւենս ու իմ փրկիչս,
իմ վահոնս, և ես անոր կը յուսամ,
Որ իմ ժողովսւրդս ինծի կը հնազանդեցնէ:
3 Ով Տէր, մարդը ի՞նչ է որ զանիկա կը ճանչնաս,
Ու մարդու որդին՝ որ զընիկու կը յարդես
4 Մարդը ունայնութեան պէս է,
Անոր օրերը անցնող շուքի պէս են:
5 Ով Տէր, խոնարչէցուր քու երկինքդ ու վար իջիր.
Եւներսւն դպչէ ու պիտի միտն:
6 Փայլակը նետէ ու ցրուէ զանոնք.

- Քու նետերդ զրկէ ու զանոնք իսուուեցուր:
7 Քու ձեռքդ վերէն զրկէ և ազատէ զիս.
Փրկէ զիս մեծ ջուրերէն ու օտարներսւն ձեռքէն,
8 Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի,
Եւ անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է:
9 Ով Աստուած, քեզի նոր երգ պիտի երգեմ,
Տասը լար ունեցող տաւիզալ սաղմոն պիտի ըսեմ
քեզի:
10 Թագաւորներսւն փրկութիւն առուզը,
Ու իր Դաւելթ ծառան չար սուբէն ազատող ան է:
11 Զիս ապատէ ու օտարներսւն ձեռքէն փրկէ,
Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի.
Եւ անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է:
12 Որպէս զի մեր որդիները իրենց երիասարդութեանը
մէջ տունկերու պէս մեծնան,
Ու մեր աղջկները պալատի շէնքին համոր փորագ-
ուած անկիւնի բարերու պէս ըլլան.
13 Որպէս զի մեր ամբարները լեցուին,
Եւ ամէն տեսուկ իբրահիմէն բղիւն,
Ու մեր ոչխարները հողաբաւոր և բիւրաւոր ծնանին
մեր արտերուն մէջ.
14 Որպէս զի մեր արջաւները *բաղմածին ըլլան,
Ու ամենեւին բանութեամբ մանել ու ելլել ըլլան,
Ու ալ աղաղակ' մեր հրազարակներսւն մէջ:
15 Երանի՛ պյատիսի իիճակի մէջ եղաղ ժողովուրդին.
Երանի՛ պյն ժողովուրդին՝ որուն Աստուածը Եհովա է:

*կոյժ, պարարտ

ՍԱՂՄՈՍ ՃԽԵ

ՕՐՀԱՆՈՒԹԻւն Դաւթիւն

1. ♪Եղ պիտի բարձրացնեմ, ով իմ Աստուածո, որ
թագաւոր ես.
- Ու քու անսւնդ յաւիտեանս յաւիտենից պիտի օրչ-
նեմ:
2. Ա,մէն օր քեզ պիտի օրչնեմ,
Եւ քու անսւնդ յաւիտեանս յաւիտենից պիտի գո-
վեմ:
3. Մեծ ու խրստ գովելի է Տէրը,
Ու անոր մեծութիւնը անքննելի է:
4. Ազգ ազգի պիտի գովէ քու գործերդ,
Եւ քու զօրութիւններդ պիտի պատմէ:
5. Քու փառքից մեծութեանը վայելչութիւնը
Ու քու հրաշալի գործերդ պիտի զուցեմ:
6. Եւ քու աշաւոր գործերդ պիտի խօսին,
Ու ես քու մեծութիւնդ պիտի պատմեմ:
7. Քու մեծ բարերարութեանդ մեջատկը պիտի հրա-
տարակին,
Եւ քու արդարութիւնովդ պիտի ցնծան:
8. Աղբամած ու զթած է Տէրը,
Երկայնամիտ և բազումոզոմ է:
9. Տէրը ամենուն բարի է,
Ու անոր սղբրմօւթիւնները իր բոլոր գործերուն
փոսյ են:
10. Ով Տէր, քու բոլոր գործերդ քեզ պիտի գովելն,
Եւ քու սուրբերդ քեզ պիտի օրչնեն:
11. Քու թագուարութեանդ փառքը պիտի խօսին,

- Ու քու զօրութիւնդ պիտի պատմեն.
12. Որպէս զի անոր զօրաւոր գործերը ու անոր թագաւո-
րական փառաւոր մեծութիւնը
 13. Քու թագաւորութիւնդ յաւիտենական թագաւո-
րութիւն է,
Ու քու տէրութիւնդ՝ ազգէ մինչև տղգի:
 14. Տէրը կը հաստատէ բոլոր իշնալու վրայ եղողները,
Եւ բոլոր վար ժամաները կը կանդնեցնէ:
 15. Ա,մէնուն աշքերը քեզի կը սպասին,
Ու ժամանակին անսնց կերպակուրը գունց կու-
տաս:
 16. Քու ձեռք կը բանաս,
Ու ամէն կինդանին փափաքը կը լեցնես:
 17. Տէրը արգար է իր բոլոր ճամբաներուն մէջ,
Ու ողբրմած է իր բոլոր գործերուն մէջ:
 18. Տէրը մօս է այն ամէնուն որ զնիք կը կանչեն,
Այն ամէնուն որ ծշմարտութեամբ զինք կը կանչեն:
 19. Անիկա իրմէ վախցողներուն փափաքը կը լեցնէ,
Եւ անսնց աղաղակը կը լսէ: ու կը փրկէ զանոնք:
 20. Տէրը բոլոր զնիք սիրովները կը պահէ,
Սակայն բոլոր ամերիշտաները կը կարմացնէ:
 21. Իմ բերանս Տէրայը գովաւթիւնը պիտի խօսի
Ու ամէն մարմին անոր սուրբ անսննը օրչնէ յաւիտ-
եանս յաւիտենից:

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ

1. Աղելուիտ Օրչնէ Տէրը, ով իր անձաւ
2. Տէրը պիտի օրչնեմ՝ իմ կեռնքիս մէջ,

- Քանի որ սէջ եմ՝ իմ՝ Աստուծյս սաղմաս պիտի ըսեմ,
 3 Մի յուսագի իշխաններուն,
 Մարդու որդիին՝ որուն քովլ փրկութիւն չկոյ:
- 4 Անոր հոգին կ'լիլէ, անկիռ իր հողը կը դառնաց:
 Նյոյ օրը անոր խորհուրդները կը կոլսուին:
- 5 Երանի՛ անոր՝ որուն օգնականը Յակոբի Աստ-
 ռատնն է,
- Ու անոր յայսը իր Տէր Աստուծյն վրայ է.
- 6 Որ երկինքը ու երկերը,
 Ծովը ու բույր աննոց մէջ եղածը ստեղծեց
 ձևաբանութիւն կը պահէ յաւիտեան,
 7 Իրաւունք կ'ընէ զրկուածներուն,
 Ու հաց կու տայ անօթիներուն.
 Տէրը կ'արձակէ կազուածները.
- 8 Տէրը կը բանայ կոյրերան աչքերը.
 Տէրը կը կոնդեսնէ վար ծռածները.
 Տէրը կը սիրէ արդարները.
- 9 Տէրը կը պահէ պանդուխանները,
 Կը հաստատէ որբը ու որբեւարին,
 Բայց ամբարիշտներուն ճամբան կը ծռէ:
- 10 Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան,
 Քու Աստուծդ, ով Արօն, աղդէ մինչև աղդ: Ոլէ-
 լուիս

ՍԱՂՄՈՍ ՃԽԵ

- 1 Պավեցէք Տէրը, վասն զի բարի է մեր Աստուծյն
 սաղմաս ըսել.
- Վասն զի քաղցր ու վայելուչ է օրհնութիւնը
- 2 Տէրը կը շնէ երուսաղէմը,
 Խարոյէի ցրուածները կը ժողվէ.

- 3 Արտովլ կոտրածները կը բժշկէ,
 Ու անոնց խոցերը կը փաթթէ.
- 4 Ասաղերուն թիւը կը համբէ,
 Անոնց ամէնն ալ էրեց անուններովը կը կանչէ:
- 5 Մեծ է մեր Տէրը, ու իր զօրութիւնը շատ է.
 Անոր իմաստութիւնը անհուն է:
- 6 Տէրը կը հաստատէ խեղճերը,
 Ու ամբարիշտները մինչև հողը կը խոնարհեցնէ:
- 7 Երգեցէք Տէրովը գոհութիւնով.
 Մեր Աստուծյն սաղմաս ըսկը քնարով.
- 8 Որ երկինքը ամպերով կը ծածկէ,
 Անձրէ կը պատրաստէ երկի համար,
 Խոս կը բուացնէ լւաներուն վրայ.
- 9 Որ անաստներուն իրենց կերակուրը կու տայ,
 Ու ագռաւին ձագերուն՝ որմէք կ'աղաղակին:
- 10 Անիկա ձիուն զօրութեանը չչոճիր,
 Մարդուն պրունքներուն չչաւնիր:
- 11 Տէրը կը հանի իրմէ վախցուներուն
 Ու իր ողորմութեանը յուսացողներուն:
- 12 *Ոլ կրուսաղէմ, գովէ Տէրը.
 Օրհնէ քու Աստուծդ, ով Արօն:
- 13 Վասն զի անիկա քու դաներուդ նիգերը տմուրցուց,
 Եւ քու որդիներու քու մէջդ օրհնեց:
- 14 Անիկա քու սահմաններուդ խաղաղութիւն կու տայ,
 Ու պարարտ ցորենով քեր կը կշուացնէ:
- 15 Անիկա իր խօսքը երկրին մէջ կը զրկէ.

*Եօթանառնէ և Հոյոց Քարտիար Բարդաւանաւեանց մէջ
 ասէ իւ ուսէ ՃԽԵ. Սալմոնը Տէր Սալմոն Ժ. Իւ Հոյոց
 Ճանախանակնէնց

- իր խօսքը շաւառվ կը վազէ:
 16 Անիկա բաւըդի պէս ձիւն կու տոյց,
 Ա-եղեամը մնիսրի պէս կը ցանէ:
 17 Իր սառը պատառներու պէս կը նետէ.
 Անոր ցուրտին գէմ ովլ կը նոյց կենալ:
 18 Անիկա իր խօսքը կը դրէկ ու կը հալեցնէ զանանք.
 իր հալը փչէլ կու տոյց, ու ջուրեր կը վազեն:
 19 Անիկա իր խօսքը կը պատմէ Յակորի,
 Ե-իր կանոնները ու դատասասանները՝ Խորայէլի:
 20 Բնութ ազգի մը այսպէս չըստ
 Ու անոնք անոր դատասասանները Ճանչցան: Ալէլուիս:

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ

- Ալէլուիս Օրչնեցէք Տէրը երկինքէն.
 Օրչնեցէք զանիկա բարձր անշերուն մէջ:
- 2 Օրչնեցէք զանիկա, ով անոր բոլոր հրեշտակները.
 Օրչնեցէք զանիկա, ով անոր բոլոր զօրքերը:
- 3 Օրչնեցէք զանիկա, ով արեգակ ու լուսին.
 Օրչնեցէք զանիկա, ով ըոլոր փայլուն սասաղէր:
- 4 Օրչնեցէք զանիկա, ով երկնից երկինք
 Ու երկինքէ վեր եղող ջուրեր:
- 5 Թող Տէրոջը անունը օրչնեն.
 Վասն զի ինք հրամագեց, ու անոնք ստեղծուեցան:
- 6 Եւ զանոնք յաւիտիւնն յաւիտինից հաստատեց.
 Կանոն դրաւ որ չխափանուիր:
- 7 Օրչնեցէք Տէրը երկրէ,
 Ու վիշտաներ ու բոլոր անդրաւնդներ.
- 8 Կրտէ և կարկուտ, ձիւն ու շոգի,
 Ե-անոր խօսքը կատարով միրկալից հով,

- 9 Լեռներ ու բոլոր բլուրներ,
 Փաղասու ծառեր ու եղեւիններ,
 10 Գաղաններ ու բոլոր անսասւններ,
 Սողացողներ ու թեւտոր թռչուններ,
 11 Երկրի թագաւորներ և բոլոր ազգեր,
 Խշաններ ու երկրի բոլոր դատասաւորներ,
 12 Երիտասարդներ և կրյս աղջիկներ,
 Ծերեր ու տղուններ,
 13 Թող Տէրոջը անունը օրչնեն,
 Վասն զի մայն անոր անունը բարձր է,
 Անոր փառքը երկրէ ու երկինքէ վեր է,
 14 Անիկա բարձրացաւց իր ժողովուրդին եղիջւրը,
 Իր բոլոր սուրբերուն,
 Իրեն ճօտ եղող ժողովուրդին,
 Խորայէլի սրգիներուն օրչնութիւնը Ալէլուիս


ՍԱՂՄՈՍ ՃԽԸ

- 1 Ալէլուիս Տէրոջը նոր երգ երգեցէք,
 Ու անոր օրչնութիւնը սուրբերուն ժողովքին մէջ:
- 2 Խորայէլ թող ու լատանանայ իր Ստեղծողին վրոյ.
 Ախօնի սրգիները թող ցնձտն իրենց Թագաւորին վրոյ:
- 3 Թող անոր անունը պարով օրչնեն,
 Թմբուկով ու քնարով սաղմոն թող ըսեն անոր:
- 4 Վասն զի Տէրը իր ժողովուրդին կը համար,
 Խոնարչները փրկութիւնով պիտի փառաւորէ:
- 5 Թող սուրբերը ու բարխանան փառքալ,
 Ու իրենց անկողիններուն մէջ ցնձտն,
 6 Աստուծոյ գովութիւնները անոնց բերնին մէջ թող
 պլան,

- Ու երկու բերնով առւր՝ անոնց ձեռքին մէջ,
 7 Որպէս զի հեթանոներէն վրէժ առնեն,
 Աւ ժողովուրդները պատժեն,
 8 Որպէս զի անոնց թագուարները շղթաներով կապեն,
 Ու անոնց աղնուականները՝ երկաթէ կապանկներով:
 9 Որպէս զի զբաւած գատասատանը անոնց վրայ կա-
 ստարեն:
- Այս անոր բոլոր սուրբերուն փառքն է: ԱԼԵԼՈՒՔԱ:

ԱԱՂԱՄՈՍ ՃՎ

- 1 ԱԼԵԼՈՒՔԱ: Օրհնեցէք զԱստուած իր սրբարանին
 մէջ.
 Օրհնեցէք զանիկա իր զօրութեանը հաստատութեանը
 մէջ:
 2 Օրհնեցէք զանիկա իր զօրաւոր գործերուն համառ.
 Օրհնեցէք զանիկա իր մեծափառութեանը համառ.
 3 Օրհնեցէք զանիկա փողի ձայնով.
 Օրհնեցէք զանիկա առախղով ու քնարով:
 4 Օրհնեցէք զանիկա թմբուկով ու պարով.
 Օրհնեցէք զանիկա լար ունեցող նուազարաններով
 ու սրբնդով:
 5 Օրհնեցէք զանիկա մեծաձայն ծնծզաներով.
 Օրհնեցէք զանիկա ցնծութեան ծնծզաներով:
 6 Ամէն շրնչ առնեցող թող Տէրը օրհնէ: ԱԼԵԼՈՒՔԱ:



2709

ՀՀ Ազգային գրադարան



NL0029382

2631